մանք բերկրէին, ոմանք հեկեկային եւ ոմանք ճխա-
յին։ Կանգնեալ էի ի տեղն, եւ ահա եկն թագաւոն
իւր. եւ յետ պահոյ միոյ լուեալ բարեկամացն եկին,
բազում կանայս սև զգեցեալ, եւ ի լաթ առեալ ի
վերայ գլխացն, ի հեռաստանէ ձայնս արկեալ ճչէին
մեծապէս և գոռալով բարձրաձայն աղաղակէին, մին-
չեւ զամենեսեան որ անդն կային՝ ի լաց հանէին եւ
նուաղեալ սրտիցն յարտօսր բղխէին. և նոքա այնպէս
եկեալ մտան ի տուն նորա։ Եւ յետ նոցա նոյնպէս մի
գունդ[1]) տեսաք, որ նոքա զնոյն աղաղակէին եւ ճիչ
բառնալով եկեալ մտին ի ներս, և ես ոչ կարացի այլ
համբերել զփղձկանացս և արտասուացս, առեալ զԼա-
չինի որդի Մօճա Սահակն եւ գնացի ի խանութ։ Եւ
յայսմ ժամու թագաւորն զտէֆտէրտարն ի քովն է ձայ-
ներ, եւ ի վերայ նորա վազեալ սրով խոցոտեալ ի
կոկծանաց վէզիրին, քանզի սիրեաց թագաւորն զվէ-
զիրն եւ իմացաւ զբարեկամ լինելն եւ զվրէժխնդիր
լինելն չարկամացն իւր։ Քանզի այս Սիաւուշ փաշան
մի անգամ այլ վէզիր եղեւ ՌՃ թվականիս, եւ որք
մեռան յայսմ տարւոջս զսոցա ընկերքն ի յայնմ ա-
տենին ըմբռնեաց և սպանեաց՝ զՂարա Զաւուշ յենկի-
չէր աղասին, զքեհեայէին եւ զՊէքտաշ աղան։ Եւ
կամեցաւ զներսի՝ որ էին ի պալատն թագաւորին,
զնոսա այլ սպանէր, որ յայսմ ամի եղեւ. ասէր թէ
Զաչխարհիս մալն եւ զքստակն սոքա են արգելեալ,
եւ խօսք և հրաման թագաւորական սոցա է, և զթա-
գաւորն որպէս կամին այնպէս առնեն, և չեն թողուր
որ զաչքն բանայ թագաւորն եւ կու երկուցանեն թէ
Զլինի որ խօսիս, մեք զքեզ կու պահեմք եւ դու մի՛
խօսիր։ Զներսի սեաւքն ձգել կամեցաւ եւ նոքա ի-
մացեալ մանգուլ արին ի (գ-բ-գ) և եղին ի տեղի նո-

1) գունտ.